

# ՍՏԱՐԾԻՆԱ

(Պատկերներ գիւղից)

## I

Ընդուստ վեր թռայ:

Այս այդ կաչաղակ տանտէրս: Դարձեալ նա էր: Ամէն առաւօտ այդպէս զարթեցնում էր ինձ, հանգիստ չէր տալիս: Ճշում էր թռքերի ամբողջ ոյժով, գոռում ծառայի, գոռում հարսի, գոռում նոյն իսկ անցորդների վրայ:

Անշուշտ ժամը հինգն էր:

—Աղա Մուկուչ, թաղեմ զլուխդ, էդ հւը ես բաղչի դուռը բաց թողել. էծերը պատրումնին կերան է է... փիէ, տօ դուս քշի, հարամ կերած... էդ հւը ես առտեհան բողկերը դուս տալի, Վարդան. գնա կորի տուն, հրա մէկ չայդ խմի... Հարսի, Սաթենիկ, եկէք էս լակոտին տարէք է է...

Եւ այսպէս, աչքիցը ոչ ոքի չէր վրիպեցնում: Մէկ իր թռոան, որ մտել էր անշուշտ պարտէզ և բողկ էր խժոռում. մէկ իր ծառային, մէկ հարսին. նոյն իսկ բագի շների վրայ էլ ճշում էր, հաւերի վրայ զայրանում:

Հազար ասա դու. սովորութիւն էր. առանց դրան չէր կարող: Ոչ առանց գոռզոռալու, ոչ էլ առանց առաւօտ շուտով իր բաժին երեք «ըիւմկա» արաղը կոնծելու:

\*) Շրջանական գիւղապետ, շահապ:

Անկողնիս մէջ շուռ ու մուռ գալով՝ ստիպուած էի  
լսել այդ բոլորը և դիմանալ:

Արդեօք Բնչափիսի եղանակ էր դրսում: Նոյնը,—մի  
շաբաթից 'ի վեր անընդհատ մաղող անձրեւ, թացու-  
թիւն, մշուշ... երկինքն էլ կապար, ճնշնդ...

—Վայ ես քո հաց տուողին, Մուկուչ, կանգնել ես  
էշի պէս որ ինչ... կորի ձիանոնքը տար ջրի... էն խո-  
տըն էլ շուռ ու մուռ տուր, բեալքի արեը չորացնի...

Ա՞րև, իրաւ էր այդ:

Երկու ըոպէի մէջ վեր թուայ, լուսամուտների փեղ-  
կերը բացի, յետոյ հագնուեցի և դուրս նետուեցի սեն-  
եակից:

Դժուար էր պատահում պայծառ արեով ողողուած  
օր, անամպ երկինք տեսնել Դուզանում: Բայց հազիւ  
պատշգամբ ելայ, որ սքանչացման աղաղակ դուրս թուա-  
բերնից:

Արև էր, զուարթ, ժպտուն արև, որ ջերմ ճառա-  
գայթներով ողողել էր ամեն ինչ:

Պարտէզ, դաշտ ու անտառ փողփողում էին. ոչ մի  
ամպի կտոր, մշուշն իսկ, որ անբաժան՝ ճնշում էր միշտ  
դիմացի մայրի անտառը—այժմ վլորւում, մազցում էր  
դէպի կատարներն ու այնտեղից հալւում—անհետանում:

Որքան շքեղ էր, Դիմաց՝ պարտէզների շարքը, ա-  
պա՝ գետակն ու դէպի վեր պարզուող ծաղկալից դաշ-  
տը, ուր իւրաքանչիւր բոյս ցօղաթաթախ սարսուում  
էր, ուր սիզաւէտ մարդերը պսպղում էին հաճոյքով և  
նրանց մէջ կայտուում էին այծեր, արածում՝ կովեր ու  
ոչսարներ:

Հեռնւն, մշուշի տակից պարզուում, երևան էին գա-  
լիս դալարագեղ լեռներն ու անտառը. երկնքի պարզ  
խորքի վրայ շեշտուում էին ծառախմբերով պատած գա-  
թթներ...

Իսկ թուչունները... Որքան բարձր, որքան գեղգեցի  
երգում էին ամեն կողմից, ոստոստում բարտիների կա-  
տարներին, խմբային խաղեր սարքում, համերգներ

կազմում և ճիշ ու դայլայլով սաւառնում դէպի կանաչ բլուրները...

Մեղուներն էլ դուրս նետուած փեթակներից, զուարթ բզզոցով կոյտ առ կոյտ սրանում էին ամեն ուղղութեամբ։ Գլխաւոր բերքի այդ օրերին նրանք ամբողջ մի շաբաթ ստիպուած էին փակուած մնալ և ահա այժմ աճապարում էին խորիսխները լեցնել։ Այլև ծաղկեփոշի չէին բերում, այլ միմիայն մեղք՝ այն բազմազան ծաղկիներից, որոնք ամեն կողմից գլուխ էին դուրս պարզել՝ ժպտելու արևին, հրճուելու նրա տուած ջերմութիւնով։

Դիւն ամբողջ կենդանացել էր. նա մեռած, գերեզմանի էր նման անձրևալից օրերում։ Հողը արագ չորանում էր այժմ, շողի արձակում։ ճոնչող սայլերը դաշտըն էին ենում. երևում էին ձիաւորներ... Սագերի երամներն էլ, օրօրուն, վզերնին ցցած՝ շարժւում էին դէպի գետափը։

—Բարի լոյս, բարի լոյս, կանչեց զուարթութեամբ տանտէրս—այ լաւ արև... հիմրկանց դէնը էլ դրախտ կըլի ըստեղ...

—Այն։

—Ըսէնց ա մեր տեղը, անիծուի՛ նա... դժոխք ա անձրև օրերին, դրախտ՝ երբ արև ա անում... Դու էլ չես գնայ սար, մերոնք հրէս կերթան։

—Ո՞չ, պէտք է փեթակները նայել, մաքրել...

—Հա, թացութիւնը հալ չը թողեց... կըի որ կաթած էլ ունենայ...։

Մտայ պարտէզ։ Որքան շուտ ցեխ էր կտրում հողը, այնքան էլ արագ ցամաքում էր։ Մառայիս հետերկար զբաղուեցինք նրանով, յետոյ, կէսօրուայ մօտ, մտածեցի հանգչել քիչ ճօճի (գամակ) մէջ, որ կապուած էր երկու ծառերի ստուերի տակ։

Երկար սակայն մենակ չմնացի։ Նախ, աջ կողմիս դրացու կինը, որ իրանց պարտէզի մէջ ինչ որ բանով էր զբաղուած, դիմեց ինձ «աղա-աղբէր» տիտղոսով և

ամանը պարզած պատի վրայով, ջուր ինդրեց կողքիւր գտնուող աղբիւրից, Յետոյ, երկու մեծ թռչուններ գըլիս վրայի ծառի ճիւղերի մէջ մի լաւ գզզեցին իրար և տերենների անձրև հոսեցրին. հուսկ ուրեմն նկատեցի թէ ինչպէս պարտէզի դռնից մի առ մի ներս մտան և դէպի իմ կողմը դիմեցին մի խումբ գիւղացիներ:

Ամենից առաջ քայլողը նիհար ու երկարահասակ անձ էր: «Չերքեզկա», երկար կօշիկ, կլոր-կարճիկ փափախ, ձեռքին էլ մտրակ, Զը մոռանամ սուրն ու արծաթապատ գոտին:

Ցաւագար աչքերը ճպճպուն, շուրթերը պրկած, քիթը ցցած՝ զննում էր նա պարտէզը և մէկ-մէկ էլ, ճիշտ պարսիկ մեծաւորի նման, առանց դառնալու, երմի իր նկատողութիւններն էր, որ հաղորդում էր հետևորդներին:

Այդ մարդու հետ թէև դեռ գործ չէի ունեցել, բայց ծանօթ էի: Շրջանական, 5—6 գիւղերի շահապն էր: «Ստարշինա», «գողովա» այդպէս էին տիտղոսում նրան գիւղացիք:

Անմիջապէս ետևից քայլող՝ պրագին էր: Ագռաւի էր յիշեցնում այդ երկար ու կոր, վլուխը միշտ կախ, գունտ քիթը կապոյտ ու ստրկական շարժումներով երիտասարդը: Մի քանի անգամ հանդիպել էի նրան. հազիւ մի քանի բառ էի լսել բերնից, սակայն միշտ օղու հոտը զգացել:

Ինչպէս ամէն «ուշիմ» գրագիր, ճարտար քերթող էր Սբասիլինը: Ձեռքն ընկնողը էժան չէր պըճնիլ: Պըտուկոլներ (աբձանագրութիւն) կազմողն էր: Նայելով թէ մկ և ի՞նչ կը կոխէր ձեռքը—նրա համեմատ էլ արձանագրութեան մէջ այս և այն եղբակացութիւն կը գոյացնէր: «Ստարշինան» կարդալ-գրել չգիտէր, իր անունը—այն հրաշալի հնգատաս Գիզոլ անունը ստորագրել սովորել էր, բայց այդ իսկ ճզմզելու համար, թշուառը ստիպուած էր առ նուազն տամն անգամ աչքերը ճպճը-պացնել, գոնէ երեք անգամ քիթը վեր քաշել և երեք

անգամ էլ գրիչը կոտրելու ուժգնութեամբ՝ թանաքի մէջ թաթախել:

Եւ ի՞նչ հարկ, ինդրեմ, որ ծանրակշիռ պաշտօնեան աւելին գրել զիտենար: Ձեռնտու էլ չէր: Կնիքը դրանում: Հանել, կոփել, միշտ մի-երկու մանէթ այդ նեղութեան համար ստանալը շատ աւելի նպաստաւոր էր:

Ահա այդ զոյգն էր, որ գալիս էր դէպի ինձ՝ բաւական հանդիսաւոր, պաշտօնական քայլերով, ետևից տեղական քեօխվան, մոռվթը ցցած գզիր Սահակը, այլ և ուստա Համօն, կարմրամազ Սմբատը, երեսփոխը, Խօլերան...

Հասկացայ խմբային այդ այցելութեան պատճառը: Պարտէզիս մէջ կար մի աղբիւր: Նրա ջրի կէսը, անցնելով մեր հողի վրայ կեղոննացող ստորերկրեայ աւազանում, խողովակներով գնում էր գիւղի ներքին թաղերի աղբիւրին և: Մի ամսից 'ի վեր աւազանը փչացել էր, ջուրը դուրս էր տալիս և շուրջը ճահիճ գոյացնում, իսկ զբանով ներքին թաղի աղբիւրի ջուրը լիովին կարում:

Ցայտնել էի գիւղացոց: Նրանք դիմել էին որ աւազանը շինել տամ իմ ծախսով, բայց մերժել էի և առարկել որ դա իրանց պարտքն էր:

Գանգատուել էին: Այժմ երեկ ստարշինայով, քեօխվայով և զբագրով միասին՝ եկել էին որ արձանագրութիւն կազմեն:

—Բարի լոյս, պ. Երուանդ, կանչեց հեռուից ստարշինան—հօք, էդ ի՞նչ ա, չըմ՞ երեխութիւնդ միտդ աընկել, որ ճօճի մէջ ես պառկել...

Եւ մօտեցած՝ նստեց գետնի մէջ հաստատուած նըստարանին, մտրակը զրեց սեղանի վրայ, նայեց շուրջն ու ասաց.

—Զէ, լաւ ես շինել... Բաս սնկած ծառերդ ուր են... էդ են եաշշիկներդ...<sup>1)</sup>) Քիչ ա, ես մեր բաղումը

<sup>1)</sup>) Դադանի սիստեմով փեթակներ:

200 հատ ունիմ...

Ելայ և նստեցի դիմացը:

— Աղբիւրն էլ սա ա. շարունակեց նա լուրջ—բարչին ըտէնց քիչ ա ջուրը:

— Աւազանը փշացել է. տակից ջուրը դուրս է տալիս և ահա այդքան հողը ճահիճ է շինել... Ստիպուած պիտի լինեմ բոլորովին քանդել, առուակ դոյացնել, եթէ գիւղացիք չինեն:

— Հա, ՚ի հարկէ, հողը խարաբ ա անում... Դէ շինել տուր էլի. գեղացիք էլ շնորհակալ կ'ըլեն:

— Գիւղացիք պիտի շինեն և ոչ թէ ես:

Գիւղացիներից ոչ մէկը դեռ չէր խօսում: Ուստա չամօն քեօխսվի հետ մօտեցել աղբիւրին՝ կկղել էին ու զննում:

— Ասենք դու մի քիչ զրուստ ես, գեղացիք էլ պիտի շինեն. ամա չէ որ սա քեզ էլ վսաս ա տախիս...

— Համ էլ, մէջ մտաւ Խոլերան—թէ մենակ գեղացիք շինեն, էս ա էլ քեզ ջուր չեն տալ ըստիանց:

— Որ կռանաը (ծորակ) ըստեղից փակուի, ձայնեց ուստան աղբիւրի մօտից—ցածի աղբիւրին կերթայ էս ջուրը:

— Սխալուում ես, ուստա. մօտ գնացի ես—փորձիր փակիր և կը տեսնես որ չի գնալ. այ, նայիր, աւազանի տակից է ջուրը դուրս գնում և ծծում հողի մէջ:

— Հա, արեց քեօխսվէն—ըտէնց կ'ըլի... Պիտի հօգուզը շինուի... էլի մէկ 50—60 մանէթ ծախս ունի:

— Բաս, գոչեց ուստան—ծախս կուզի. ցէմէնտ, ուստի հախ, քեարփիչ... կուզէք, ինչի՞ չէ, շինեմ...

Ասաց, աւազանը ծածկող քարը դէն շպրտեց և բոլորը կռացան նայելու, բացի ստարշինայից և գրագրից:

Առ հասարակ Սրապիոնը լուռ, բաւական հեռու կանգնած, ձեռքին էր սեղմել աղտոտ թղթի մի կտոր և անընդհատ մատիտի ծայրն էր թքոտում:

Սակայն երբ ամենքը կռացել էին աղբիւրի վրայ, իսկ ստարշինան քիթը ցցած՝ ծառերի բարձունքներին

էր նայում—զրագիրը մի քայլ ետ գնաց ու մատովն ինձ  
նշան արաւ իրան մօտենալու:

Զարմացայ նկատելով նրա յանդուզն ժպիտը և այդ  
ձևով ինձ կանչելը: Զգուանքս էր շարժում ընդհանրա-  
պէս այդ ազուաւը, բայց, մի ըոպէ զայրանալուց յետոյ,  
հետաքրքրութիւնս յաղթեց և ելայ ու մօտ գնացի:

Տեսնենք, ի՞նչ ունէր ինձ ասելու այդպէս խորհրդա-  
ւոր կերպով:

Զանաց սիրալիր ժպիտ ստանալ, յետոյ ոտք վեր-  
ցրեց դէպի փեթակների կողմն ու ասաց կիսածայն.

—Հլա մէկ խնդրեմ գնանք էն կողմը... ձեզ ասելիք  
ունիմ... փեթակներն էլ մէկ ցոյց տուեք ինձ:

Գնացի: Լուռքայլեցինք մինչև առաջին ծառը: Այն-  
տեղ նա կանգ առաւ, դարձաւ ու ասաց.

—Խօ տեմնում էք, պարոն, պրատակոլ են կազմել  
տալիս... գեղացիք են, անկիրթ... գանգատել են թէ  
դուք նրանց աղբիւրի ջուրը կտրում էք... Հլա կաց մէկ  
ամէնը ասեմ... Հա. գիւղացոց դատաստանն էլ, գի-  
տէք, նրանց կողմը կը վճռի... Էս սումլ, <sup>1)</sup> Էս պրիս-  
տաւ... զլիսացաւանք. ջուրը կտրել անկարելի ա... հո-  
գուզը չեն շինել, կռանտը կը կապեն ու էլի ջուրը տա-  
կից հողդ կը փչացնի...

—Այն ժամանակ ես կը քանդեմ աւագանը, աղբիւրը.  
Ես թոյլ չեմ տալիս աղբիւրը հողովս անցկացնել, աւա-  
գանը հողիս մէջը շինել...

Անկարելի ա... աթաղան-բաբաղան շիքան-  
տուի ու ըտէնց հողիդ մեծ մասը կը դառնայ քալոտ... <sup>2)</sup>

—Կը ստիպեմ դատաստանով, որ շինեն աւագա-  
նը...

—Ամիսներ, տարիներ կը քաշի... դանգատ, էլի  
պրատակոլ, պրիստան... Դուք գիտէք, բայց որ ինձ լը-  
սէք, ես ձեզ մի լաւ, կտրուկ բան կառաջարկեմ, որ մի

<sup>1)</sup> Դատարան:

<sup>2)</sup> Ճահիճ. ոռւսերէն բառ է:

անգամով ամէն բան վերջանայ, աղքիւրն էլ շինուի, ձեզ  
էլ ջուր դայ, նրանց էլ, հողն էլ չը փչանայ...

—Առաջարկէք տեսնե՞նք:

—Այ ասեմ... Մի քիչ դէսը գնանք... էս ի՞նչ լաւ  
բռնել են էս ծառերը... ինձնրի ենս... փահ-փահ, ինչ  
էլ լաւերն են... Հա, էն էի ասում... խօ լսեցի՞ք, շի-  
նելու համար էն քիչը յիսուն մանէթ կը նստի... որ լաւ  
վճռեն, ծախսի կէսը ձեր վղին կը դնեն... Հը... ոչ,  
ըտէնց էլ կանեն. ես լաւ գիտեմ մեր գաստաւորներին...  
թէ չէ, կունատը կը փակեն, հովուզը չեն շինիլ ու բա-  
լութ կը՝ գառնայ ողջ հողդ:

Բարկացած մի շարժում գործեցի:

—Հա, հէնց ըտէնց կ'ըլի, ես լաւ գիտեմ. գեղամէ-  
ջումն էլ խօսել են ու ըտենց էլ վճռել... եա 25 մանէթ  
պիտի ծախս քաշես, եմ թէ չէ հողդ ըտէնց ջուր կը  
կտրի, կունատդ էլ կը փակեն...

—Վերջացրէք. յետոյ...

—Յետոյ էլ էն, որ օրէնքներից գուրս կայ մի ու-  
րիշ աւելի մեծ օրէնք. խօ գիտէ՞ք... էն որ բանն ա, որ  
աղամամութի մէջ դնես՝ լուս կը տայ... ըստեղ ամէն  
բան Ստարշինի ու իմ ձեռին ա... ոնց ուղենանք՝  
ընէնց շուռ կը տանք... Հլա դուք էդ «լուս տուող» գա-  
ղի ծէրը ցոյց տուէք ու կը տեսնեք... ընէնց անենք,  
որ ամէն բան էսօր և եթ դրատուի... թանգ էլ չի նըս-  
տի քեզ... մի կարմիր ա ու մի կապուտ...

Մի վարկեան ապշեցի այդքան յանդզնօրէն արուած  
կաշառքի առաջարկի վրայ: Յետոյ, զզուանօք նայեցի  
ագուաւին, մէջքս դարձրի և լուռ՝ գնացի դէպի նախկին  
տեղս, առանց իսկ ետ նայելու նորից:

Անշուշտ գրազիրը սառած—մնացած պիտի լինէր և  
կամ ուսերը թոթուած ու մի լաւ հայհոյանք արձակած  
իմ հասցէլին:

Ցամենայն դէպս ուղիղ դէպի ստարշինան գնացի և  
անվրդով, նատեցի ճոճի մէջ:

Ստարշինան նայեց ինձ, աչքերը կկոցեց, ապա դարձաւ եկող գրազրին և կանչեց.

—Հ՞ը, Սրապիսն, պարոնի ծառերը տեսար, շատ են...

—Զէ, ստարշինա, պարոնը մկի չ'ուզաց էլ ծառերը ցոյց տալ... վախենում ա որ աչք դիպչի...

Ստարշինան դարձեալ նայեց ինձ: Ժպառում էի: Կատարելապէս ըմբռնել էի թէ նրա տուած հարցի և թէ գրազրի պատասխանի ներքին իմաստը:

—Շատ խոստացած. ուզում էր հարցրած լինել պաշտօնեան:

—Չուզեց ոչինչ տալ, մերժեց. հասկացրել էր գրագիրը:

## II

Ու այնուհետև որոշուած էր ստարշինայի բռնելիք գիրքն ու վերաբերմունքը:

Անմիջապէս առաջ նա դէմքը կնճռեց, արագ շարժումով զիսի փափախը, ետևից զարնելով՝ իջեցրեց դէպի ճակատը, ապա կուրծքը ցցեց և երրորդ շարժումով՝ նստարանի վրայ ու ոտները պազեց դէպի ինձ:

Մտնում էր ստարշինական դերի մէջ: Սկսում էր կոմեղիան: Հազիւ ծիծաղս զսպած՝ սպասում էի եղածին:

Երբ այդ բոլորն արել էր Գիգօլը, մտրակի կոթը ուսազվից ետ պարզելով՝ կանչեց մօտ գրազրին, հազաց և խիստ ձայնով ասաց.

—Դէ հմի գրի. պիսէր...<sup>1)</sup> Զեր հրամանոց անունը, պարոն նըռուանդ:

—Սմբատ, ասացի ծաղրելով:

—Ո՞նց Սմբատ. ձեր անունը իսօ երուանդ ա...

—Բաս որ գիտէք, էլ ուր էք հարցնում:

1) Գրագիր:

— Հանաքները թողէք, ասաց նա յոխորտաձայն—  
ըստի վոլոստնօյ ստարշինան<sup>2)</sup> ա խօսում:

Ասացի անունս և ազգանունս:

— Հմի հրամանոցդ պաշտօրաը... Ամսիս 5-իցը ու-  
սիլնի—իւրէն<sup>3)</sup> ա ուէզու...<sup>4)</sup> ըտէնց չի՞, պիսէլ...

— Հրամանք ես, ստարշինա, շտապեց ասել զբագիրը—  
անցեալ ամսի 5-իցը ոսսելէնա ախրանա ա գութերնեն<sup>5)</sup>  
ողջ... առանց պաշտօրաի մարդ չպիտի երեք օրից  
աւելի մայ... չունեցողին էտապով<sup>6)</sup> կը դրկեն ուէզու-  
նի նաշալնիկի<sup>7)</sup> մօտ...

— Ու ասում եմ... նեղութիւն կըի պաշտօրադ ցոյց  
տալ...

— Բայց չէ որ, ասացի—երրորդ ամիսն է այստեղ եմ.  
Ինչու մինչև այժմ չէիք հետաքրքրուել:

— Մենք մեր բանը լաւ դիտենք, պարզն. պատաս-  
խանեց հարցութեամք ստարշինան—պարտաւոր էլ չենք  
ամեն հարցմունքի ջուղար տալ... Մերն էն ա, երբ ու-  
ղենանք հրամայենք ու պիտի կատարուի...

— Համ էլ էդ քեօխվի պարտքն էր. մէջ մտաւ զբա-  
գիրը:

Գիւղացիք այժմ թողել էին աղբիւրը և լրջադէմ,  
զգալով որ «պաշտօնական գործողութիւններ» էին սկը-  
սում—մօտեցել ու շրջապատել էին մեզ:

— Հա բաս... արեց ստարշինան՝ քեօխվին դառնա-  
լով—քեզ պըէդակիսանիէն<sup>8)</sup> եկել ա խօ, էլ ուր ես ա-  
ռանց պաշտօրաի մարդ թողում գիւղումը... դու մա-  
գամ գիտես ոչ որ հմի ուսնի-իւրէն ա...

— Ուսիլնա ախրանա... ուղեց զբագիրը:

Գիւրը մի բան մըթմըթաց քթի տակից, յետոյ կա-  
մենալով պատժել իր այդ յանդզնութիւնը՝ իսկոյն քե-

<sup>2)</sup> Շրջանական տանուտէր. շահապ. <sup>3)</sup> աղճատաձ՝ յԱՍԼԵՆ-  
հայ օхранա զօրեղացրած դրութիւն. <sup>4)</sup> զաւառ. <sup>5)</sup> Նահանգ. <sup>6)</sup>  
Ուաքով և զինուորներով ինչպէս բանտարկեալ. <sup>7)</sup> գաւառա-  
պետ. <sup>8)</sup> Հրաման:

ըանը ծածկեց երկար ցուպովը։ Քեօխվէն շփոթուեց, ժպտաց ու ասաց.

— Դէ էս մարդը իսօ փախստական չի։ անով-տեղով ըստեղ ա...

— Մինոյն ա, արեց խստութեամբ ստարշինան—ուսիլնի-խրէնը ֆիդանների համար էլ ա... Մենք չենք ուզում որ մեր վոլոստի մէջ ըտէնց մարդիկ ըլին...

Ապա դարձաւ ինձ ու կրկնեց.

— Հրամանքդ նեղութիւն կրիր պաշպորտդ...

— Լաւ, ասացի ես—տանն է. եթէ կուզէք՝ գնանք քիչ նախաճաշ անենք և ցոյց կը տամ:

— Զկուսկի՞... փայլեց ստարշինի դէմքը—հա տօ, անիծուի մեր էս պաշտօնն էլ. էնքան գործ կայ, որ մարդ մոռանում ա թէ քաղցած ա... ընչի չէ, գնանք... թէ զինի կունենաս ու...

— Ունիմ:

— Բաս լաւ... Ասում ես պաշպորտ էլ ունիս էլի՞... չը...

— Կայ:

— Էդ լաւ... Որ ըտէնց ա, պարոն, շուտ գանգաստդ ասա, թող գրի պիսէրն ու գնանք փորներս պնտացնենք քիչ:

— Ես գանգաստ չունիմ... եթէ գիւղացիք մինչև 15 օր ևս չեն շինիլ աւազանը, այն ժամանակ աղքիւրը կը քանդեմ, ջուրն էլ առուակ կը շինեմ—կ'երթայ:

— Հլա կաց մէկ. ճչաց Խոլերան—էդ ոնց թէ կը քանդես. բաս մեզ առանց ջուրի՞ կը թողաս:

— Եթէ մաքուր ջուր էք ուզում, աւազանը շինէք:

— Կացէք հլա... մէջ մտաւ ստարշինան: Յետոյ ոտքի ելաւ, ինձ դարձաւ ու աւելացըեց.

— Էս սպօրը զակուսկի<sup>2)</sup> վրայ լաւ կը դրսուի... գնանք, տղէրք... ինչ ա, բոլորին ես դնաղ անում, պ. Երուանդ:

<sup>1)</sup> Նախաճաշ:

<sup>2)</sup> Ակուսկի:

— Ինչու չէ. համեցէք բոլորդ էլ:

— Զոմարդ մարդ ա, ես ու իմ Աստոծը. ասաց ստարշինան քայլելիս՝ զիւղացոց—Հը, ի՞նչ ա, խամ քաղաքացի էք գտել, որ վրայ էք տալիս... Սա մեղանից լաւ ա հասկանում զակոնը... Զակոնով պիտի վարուենք թէ ոչ... թողէք, ճաշի վրայ կը վերջացը-նենք... Մարդը պաշ զորտ ունի, ֆիդան չի, քաղաքա-վարի ինսան ա... Գնանք, պ. Երուանդ, որւ քէֆդ քեօք պահի, մենք չենք թողալ որ գեղացիք գլխիդ նատեն...

— Քայլեցինք դէպի դուռը: Անմիջապէս, զակուակի անունից կակղացած ստարշինան թողեց ինձ առաջ անց-նելու, յետոյ, մինչև պարտէզից դուրս գնալը՝ զովեց ծառերը, զիւղացոց դարձած՝ շեշտեց որ նրանք շնոր-հակալ պիտի լինին ինձալէս մարդ իրանց մէջ գտնուե-լու համար, որ ես ջոմարդ մարդ եմ երեսում և որ վեր-ջապէս զիտեմ «պատիւս պատուաւորաց և հարկս հար-կաւորաց» տալը...

Եյս բոլոր միտումաւոր ակնարկներով լի զովեստ-ները նա անում էր հանդիսաւոր, աչքերը անընդհատ կկոցելով. իսկ զրագիրը, որ թուղթը գրպանն էր կոխել, այժմ զլուխը կախ՝ դալիս էր նրա ետևից:

Գնացքը փակում էր գզիր Սահակը՝ իրանից կրկ-նակի մեծութեամբ ցուալը միշտ ուսին դրած:

Երբ տուն էինք մտնում, տանտէրս, որ լուսամու-տից նայում էր, կանչեց.

— Բան-բան, էդ ի՞նչ խաբար ա. Էտքան մարդիկը մըդիանց որսացիր, պարոն Երուանդ... Սաղ ուէզովի<sup>1)</sup> մեծանոնքը թոփ ես արել—բերում:

— Եկել են պրատակօլ կազմելու:

— Դուք Աստուածը... ի՞նչի, տօ, էն ո՞ր շան որ-դին ա գանգատել քեզնից:

— Գիւղացիք:

— Այ կասես... Համա չըլի՛ էն անտէր աղբիւրի

համար... Հլա կացէք զամ տեսնամ էդ մնց բան ա...  
—Համեցէք, հրաւիրեցի ես—համ էլ ասէք ձեր գի-  
նուցը մի-երկու շիշ ուղարկեն մեզ:

—Երկու. ծիծաղեց ստարշինան—ուղտերին ուղում  
ես գտնլով ջրի:

—Տօ ջաններդ սաղ ըլի... կանչեց տանտէրս մօ-  
տենալով մեզ—հրէն կարասը ընդի՛ չի... պարոն ե-  
րուանդին վախեցնել չես կարայ. ողջիդ էլ գինու մէջ  
կը խեղդի:

—Տօ. ուր ա բաս մէկ օր էլ մեզ չխեղտեց. ասաց  
քեօխվէն ծիծաղելով:

—Դու ինչացու ես, դու. ծաղրեց նրան տանտէրս  
—ընչի՛, մուֆթա գինի՛ ա գտել պարոնը... Դէհ, հլա  
մէկ համեցէք օթախը...

Ասաց և առանց սպասելու որ ես կարգադրութիւն  
անեմ տանս մէջ, մտաւ սրահս առաջ և յետոյ ինձ ներս  
թողեց:

Կանչեցի ծառային: Մեղան դրին, բերին ինչ կար  
և քիչ յետոյ բաժակները լցուեցին:

Ահա հէնց այդ ժամանակ էր որ մէկէն աղբիւրը  
անցաւ երկրորդ պլանի վրայ, որովհետեւ մի նոր խնդիր  
եկաւ գրադեցնելու ստարշինային:

Մեզ ծառայում էր սեղանի վրայ մեր Սիսակ անու-  
նով ծառան, որ միենոյն ժամանակ և վարպետ այգե-  
գործ էր, ճարպիկ ու հասկացող մշակող:

Մշտապէս խոռվկանի դէմքով այդ երիտասարդը  
շրթումքները կախ, յաւիտենապէս դժգոհի շարժուածք-  
ներով գնում-գալիս էր առանց ուշադրութիւն գրաւե-  
լու իր վրայ:

Սակայն երբ մի անգամ, երկի կամենալով իր խո-  
նարհութիւնը արտայայտել՝ գինի լեցրեց ստարշինայի  
բաժակում, Գիկոյը յանկարծ դարձաւ, աչքերը ճպճպա-  
ցնելով նայեց նրան ու գոչեց.

—Փիէ... էս Սիսակը չի... ձեզ մօտ ա ծառայում:

—Հրամանք ես, ստարշինա, ես եմ... Դէ էլ ինչ

4789

անեմ, ով ինձ հաց կը տայ կը պահի. Գրիգորն էլ որ  
ընէց զուլում արաւ ինձ...

—Կաց հրա... Քեզ հետ գործ ունիմ... Ադա Սրա-  
պիօն, սրա անսունը էն թղթումը չկմը...

—Կար, ստարշինա:

—Բայ լաւ...

Ապա փափախն իջեցրեց ճակատին, խիստ կերպա-  
րանք ստացաւ, պարզեց ձեռը դէպի Սիսակն ու ասաց.

—Պաշպարտող... հմի սլինի-խրէն ա:

—Ուսիլնա-ախրանա, այ ստարշինա, ուղղեց նորից  
գրագիրը:

—Դու ձէնդ քեզ քաշի հմի. բարկացաւ այս ան-  
գամ պաշտօնեան-լեզուն իմն ա՝ սլանի-խրէն եմ ա-  
սում... Շնուտ, Սիսակ, պաշպարտող բի տեսմնք...

—Եա... գունատ ետ քաշուեց ծառաս—ինչ պաշ-  
պօրտ...

### III

Ալէքսանդրօպոլի գիւղերից բերուած որբ տղայ էր  
Սիսակը: Միայն մի եղբայր ունէր, որ անտառապահի  
օգնական էր: Մանկութիւնից մեծացած Դուզանում,  
տեղացիի նման էր դարձել: Խնամել էին նրան տանտէ-  
րըս, ջրաղացի քարերով առևտուր անող Մելիքը և մի  
քիչ էլ ուրիշները:

Այժմ, մօտ 25 տարեկան, մտադիր էր ամուսնանալ  
և տնիկեսայ լինել Դուզանում. ասում էին մինչև իսկ  
որ նշանուել էր, բայց մի քանի ամսից ի վեր, ինչ-ինչ  
գժտութիւններ նրա և աներոջը մէջ՝ Սիսակին թողել  
էր շուարած, դռնէ դուռ ընկած: Գովել էին ինձ որպէս  
լաւ այգեգործի. վարձել էի նրան, պարտէղիս մի ան-  
կիւնում հէնց լինքը մի խրճիթ էր կառուցել ցցերով և  
նրա մէջն էր ապրում:

Իսկ թէ նոր ինչ էր պատահել, ինչու յանկարծ  
նրանից անցագիր էին ուզում (ինչ որ չէին ուզել 20

տարուց ի վեր) — դա դարմացրեց թէ ինձ և թէ իրան  
— Սիսակին:

Հստ երեսյթին միւս գիւղացիք բոլորն էլ գիտէին  
պատճառը: Ոմանք ժամանում էին, միւսներն անտարբեր՝  
սպասում էին լինելիքին:

— Պաշպարտ... կրկնեց նորից Սիսակը կակազելով  
— ի՞նչի, բա ես եադ եմ... Դու ինձ չես ճանաչում,  
ստարշնա:

— Դուս մի՞ տալ, այ շաշ... կանչեց նրա վրայ  
պաշտօնեան — ես, հլա դու մէկ մատ լակոտ էիր, որ  
գիւղումը ականջներդ քօքել նմ... Ամա հմի սլինի-խրէն  
ա, ասացի, ու առանց պաշպարտի չի ըլի...

— Եա... մնց թէ խրէն ա... բա ինձի՞ ինչ... կան-  
չեց վրդովուած Սիսակը — բա դու չես իմանում որ ես  
պաշպարտ սկի չեմ էլ ունեցել:

— Էդ ա էէ... Դու հլա ըստեղի վրան զրուած  
չես, բա ուր ես ըստեղ վեր ընկել առանց բիլէթի, հը...  
փալաս-մալասդ հաւաքի դէ, ու զնա եա բիլէթ հանի,  
եա թէ չէ էլ էս գեղի դրաղովը անց չկենաս... Սա  
մեր հրամանն ա...

Հարկ համարեցի միջամտել: Թշուառ Սիսակը երե-  
րուն՝ կարկամել էր ու քիչ էր մնում լաց լինէր զայ-  
րոյթից:

— Լսեցէք, պարսն Գիգն, ասացի — էլի՞ դուք տա-  
րօրինակ բաներ էք անում. այս մարդը վաղուց այստեղ  
է, հասարակութեան անդամ է, ինչու էք վոնտել ու-  
գում:

— Ըտէնց ա զակօնը, ասաց գրագիրը — առանց  
պաշպարտ չի կարելի. պաշպարտ չունի՝ թող գնա իր  
տեղիցը հանի:

— Համ էլ էդ սիլնի-խրէն ա, — ի՞նչ զահրումար  
ա, աւելացրեց ստարշնան — փիս բան ա ըլել. որ մէջ  
տեղ ընկաւ, ասում են, առանց պաշպարտի մարդու բըռ-  
նելն ու քշելը մէկ ա ըլում...

— Կաց հլա, գոլովա. խօսեց տանտէրս — չի՛ ըմիւ,

որ մի կերպ անենք էս խեղճ տղի համար... մնայ ըստեղ ու գիր զրի որ դրկեն,

— Զէ, չէ, մնց կըլի... թող գնայ գեղիցը. մէկ էլ աեսար պլիստաւն իմացաւ.... Լսեցիր, Սիսակ, էգուցուանից էլ առանց բիլէթի էս գեղումը, իմ վոլոստումը<sup>1)</sup> սկի չերևաս, թէ չէ էտապով քեզ քշել կը տամ:

— Խմիր, առ. բաժակը նրան պարզեց տանտէրս—լաւ ա, մի բարկանալ, հասկացանք... Կ'երթայ էլի, ինչ կայ. կերթայ պաշտորտ կը հանի ու էլի կը դայ... եանի դրանով խօ Սիսակից չ'աղատուեցին...

Ու աչքով արեց Սիսակին, որ սենեակիցը հեռանար, Դեռ մութն էր ինձ համար. տանտիրոջս ակնարկութիւններից երևում էր որ մի ինչ որ ինտրիգ կայ ինդրում...

— Իմ գործերը կը մնան. խօսեցի ես—քեալամի բուկը տալու<sup>2)</sup> ժամանակն է..., Եթէ մի քանի օր ժամանակ տար, ես ինքս կը գրեմ և կ'աշխատեմ որ անցագիրը ուղարկեն:

— Զէ, մնց կըլի... Հը<sup>3)</sup>, Սրապիծն, ըտենց չի—չի ըլի... Են զահրումար պլիւպիսանան մնց ա ասում, դու ես կարդացել:

— Ասում ա, խօսեց ծանրակշու՝ գրագիրը—առանց պասպորտի չի կարելի. որ գեղումն էլ որ էլաւ քեօխվին պողսուղ<sup>3)</sup> կը տան, կը պատժեն...

— Փիէ... ոստնեց քեօխվէն—թող գնա ոադ ըլի պիսիցս էէ. ինչի, ես զի՞ժ եմ, որ նրա պատիժը քաշեմ... Աղա, Սիսակ, հակոռներդ խուրդ ու խաշ կ'անեմ թէ էգուց առաւօտ քեզ ըստեղ տեսել եմ...

— Տօ գնա է, Սիսակ... գնա որդի, գործիդ գնա ու թող տեսնենք ընչի են կատղել մեր մեծանոնքը... Գնա որդի, մեր խանումին էլ ասա՝ թէ իշխան ձկնիցը կայ, մի քիչ մազացու դրկի... էս գինիներն էլ պլիսան:

1) Համայնք. 2) հող լցնել բոյսի տակը. օկչիչի պակապ. 3) ուստի տակ:

Սիսակը լուռ՝ շշերը հաւաքեց և զլուխը երերջնելով դուրս գնաց:

Ոչ ոք չխօսեց մի բոպէ։ Ստարշինան կրացել էր շաքարով շինած սալաթի վրայ, միւս զիւղացիները սենեակս էին գննում, իսկ ուստա Համօն փառակազմ զըրքերին պլշած իր կապոյտ աչքերը, ակներև կերպով զարմանում էր թէ արդեօք ես համբերութիւն էի ունեցել ծայրէծայր կարդալու այն հաստափոր հատորները։

— Հըմ... արեց վերջապէս ստարշինան—էս սալաթը լաւ բան ա ըլել... Կասես սկի գինի խմած չըլեմ... Թըի պէս կանեց...

— Եանի դու սրանք ողջ կարդացել ես... չկարողացաւ իրան զսպել ուստա Համօն և դարձաւ դէպի ինձ։

— Զէ հա... արեց Խոլերան—մարդ հարուր տարի ապրի, էսքանը կարող չի կարդալ...

— Բակի Աստուածաշունչնի են. դիտեց ել ևսփոխը։

— Զակոնի գրքեր կ'ըլեն. պնդեց զրագիրը։

— Բառարաններ են. ժպտեցի ես—ինչ խօսք ուզենամ՝ միշտ կը գտնեմ... Այ, կ'ուղէք հէնց գտնեմ էղ տսիլէննայա ախրանա բառը և ասեմ թէ ոնց են նրա օրէնքները։

— Հլա... գոչեց տանտէրս—Դու քո Աստուածը, մէկ նայի տես թէ ստարշինան իրաւունք ունի Սիսակին գեղիցը քշել։

— Ճո ինչ իրաւունք, ճայնեց ստարշինան—իրաւունքը որն ա. զակոնն ըտէնց ա—պրծաւ գնաց. էլ ըստեղ իրաւունքի բան չկայ։

— Դէ զակոնն էլ իրաւունքն ա էլի. ասաց երեսփոխը։

— Զէ հա... ծիծաղեց քեօխվէն—տօ մարդ էլ իրաւունքիցը կը դողմյ շան պէս. ամա արի տես, որ զակոնի անունը չեն տալիս—դողը ջանդ ա ընկնում. կ'ասես խոլեր բռնած ըլի քեզ։

— Դէ հալբաթ, աւելացրեց Խոլերան—զակոնն ուրիշ ա, իրաւունքն՝ ուրիշ...

—Եանի այ Գիգոլ, ասաց տանտէրս—արի ու Պը-  
ռիսան ասա... Էդ ոլինի-խըլէ՞նն ա քեզ ստիպում, թէ  
նրանից աւելի... ընէնց էլի... Հը, դու ըլես էն Ս. Գէ-  
ոբդը...

—Ուրիշ ի՞նչ պիտի ըլի... ասաց խասութեամբ  
ստարշինան—ասի քեզ՝ որ զակոնն ըտէնց ա հմի... ՚ի  
զուը խօ չի, որ ինձ ստարշինա են արել, վոլստնի  
սաաբշինա<sup>1)</sup> ... ես պիտի զակոնը պահեմ...

—Զէ, չէ, դու էն ասա, եանի ըտի խօ Գրիգորի,  
էն չոլախ քաֆթառի մատը խառը չի... Հը... ընէնց,  
ուզում ա Սիսակին ռադ անի, նրա աշխատանքն ուրա-  
նայ, իր խոստմունքը մոռանայ... Կըլի որ ուրիշ փեսա-  
ցու էլ գտած ըլի...

Ստարշինան մի ումպով դատարկեց բաժակը, երկի  
վարկենական շփոթութիւնը ծածկելու համար. յետոյ  
աչքերը ճպճպացրեց ու ասաց.

—Զէ, Գրիգորը ըստի գործ չ'ունի... ինձի ի՞նչ որ  
աղջիկն էլ Սիսակին չի ուզում տայ... աղջիկը իմը խօ  
չի...

—Այո, բայց մի ամբողջ տարի որ Սիսակին բանե-  
ցըել է խաքելով թէ աղջիկը նրան կը տայ, տնիկեսայ կը  
շինի...

—Ե՞ն դու էլ, պ. Երուանդ, արեց քեօխսվէն—ի՞նչ  
ես Սիսակին ականջ դնում:

—Լաւ ա, հերիք ա... վեր կացաւ սեղանից ստար-  
շինան և ինձ դարձաւ.

—Շնորհակալ ենք, ախպէր... Այ ադա, դուք էս  
ի՞նչ տեսակ մարդիկ էք. եկանք որ աղբիւրի գործը դպու-  
տենք ու չթողեցիք էլ... մարդու հացը կերանք...

—Ոչինչ. միջամտեց քօեխսվէն—պարոնը մե՛րն ա,  
եօլա կը տանենք:

—Զէ, էդ իմ գործն ա. ասաց ստարշինան—ես ու  
պ. Երուանդը հմի քիչ բաղը կերթանք, ծառերը, եաշ-

1) Շրջանական տանուաէր:

շիկները կը տեսնաք ու ընտեղ էլ բանը կը վերջաց-  
նենք... Հ՞ո, պարոն, ըտենց չի...»

— Եկաւ, ասացի ես ժպտելով:

— Դէ, խալիքը, դուք գեղամէջ զնացէք. ես էլ վեր-  
ջացնեմ ու մէկ կէս օհաթից կը դամ... Աղա Սրապի-  
ծն, դու էլ զնա Մաթօին ասա, որ շան որդին դուքան-  
ների առաջը դայ իմ հրամանին, թէ չէ կերթամ դամչիովս  
պուկը կը ջարդեմ... Գնանք, պ. երուանդ, գնանք մէկ  
ծառերդ տեսնենք. ասում են՝ լաւն են...

Բոլորս դուրս ելանք, իսկ ստարշինան յուսալից՝  
որ պրագի չ'արածը ինքը կը յաջողեցնէք, ինձ հետ  
պարտէզ իջաւ:

## IV

Վիճակուած էր. այդ օր ստարշինան կաշառք չպի-  
տի ուտէր: Որովհետև հազիւ մտել էինք պարտէզ, որ  
Սիսակը վաղելով եկաւ յայտնելու թէ քաղաքից երկու  
հիւրեր էին եկել ինձ մօտ:

Երկու ծանօթներ, որոնքը օգտուելով մի քանի օր-  
ուայ տօներից—եկել էին զիւղ՝ ջղերը հանգստացնելու,  
գուցէ և իմ նոր կեանքս տեսնելու:

Ստարշինան ստիպուեց գործը մի ուրիշ օրուայ  
թողնել և հեռանալ:

Հիւրերս իջան և երբ հանգստացել էին, երեկոյեան  
թէմ պարտէզ տարայ նրանց: Մեղուի փեթակներ մօ-  
տից երբէք չէին տեսել: Սիսակի հետ միասին բացինք  
մէկը, ցոյց տուի ամէն ինչ:

Յետոյ, երբ պարտէզի ներքեւում կանգ առած, մայ-  
րի անտառն էինք դիտում և ծառան մի քանի քայլ հե-  
ռու սպասում էր, յանկարծ նա մօտ եկաւ, կպաւ թկիս  
ու ասաց երկչոտ.

— Աղա-ախապէր...

— Ի՞նչ կայ, Սիսակ:

— Մէկ գետի լրացը դուրս գնանք...

— Ինչու, ի՞նչ կայ:

— Ըստ քան պիտի ցոյց տամ ձեզ:

Այնքան աղաջանք էր գրուտծ այդ խղճուկ դէմքի վրայ, որ բոլորս էլ հետևեցինք նրան և գետավն ելանք: Այդտեղ նա մեզ տարաւ գէպի աջ և երբ հասել էինք գետակի մէջ հոսող առուակին, ցոյց տուաւ նրա միւս կողմը դժնուող մի այգի և ասաց յուզուած, լացի ձայնով.

— Դուք ու ձեր Աստուածը, աղա-ախալէրներ, մէկ գնացէք մտէք էդ բաղը, մէկ լաւ մտիկ արէք թէ ինչ-քան աշխատանք էր պէտք, էն էլ մի հոգու—մինակ մարդու աշխատանք, որ չեօլիցը ըտէնց բաղ շինուէր:

— Ո՞ւմ պարտէզն է այդ, հարցրեց հիւրերից մէկը: Գնացէք՝ թէ խիղճ ունէք. շարունակեց Սիսակը աւելի ու աւելի յուզուած—առաջ մէկ տեսէք ու երբ գաք՝ ամենը կը պատմեմ:

Ես հասկացել էի: Իրաւ է, երրէք առիթ չէի ունեցել տեսնելու այդին, բայց լսել էի որ այդտեղ էր նա—նրա աներոջ այն հողը, որ շնորհիւ Սիսակի հսկայական ու անդուլ ջանքերի, ճահիճից փոխուել էր պարտէզի:

— Բայց չէ որ կարող են մեզ ներս չթողնել. առարկեցի ես նրան:

— Կը թողան... հրէն, տէրն էլ մէջն ա... Մէկ գընացէք հէնց էդ պառաւիցը հարցրէք, թէ ով ա էդ ծածառերը անկել, մէշիցը շալակով ցախ բերել ու չափառը քաշել, բաղի դովը փոս փորել... Հարցրէք թէ ի՞նչ էր առաջ էդ բաղատեղը, ով ա չորացրել, ով ա պատրուանին արել, էդ կարտոֆէլը, էդ մարգերը... Հարցրէք թէ ով ա, որ գիշեր-ցերէկ, ողջ մէկ տարի փորել ա, չորացրել, անկել, մաքրել աւ հէնց որ չեօլիցը ըստ դարձրել, զգակոթին տուել են ու շան պէս դուս քցել... հմի էլ ուզում են ըտէնց, նամարտի պէս քշել գեղիցը ու նրա աշխատանքը վայելել...

Յուղմունքը շատանում էր, սկսել էր լալ գրեթէ.  
Ճայնը դողում էր շրթունքների հետ:

—Գնացէք, շարունակեց նա—ես ըստեղ, կուչ կը  
գամ էս քարերի մէջ... ձեր դատաստանին կը թողամ.  
Թէ կասէք «Սիսակ, ձէնդ կտրի, իրաւունքը քոնը չի»  
գլուխս դէմ կը տամ որ խփեն... Սկի աջայա<sup>1)</sup> չանէք,  
աղա-ախպէրներ, մէկ լաւ տեսէք, մէկ լաւ հարցըէք...:

Հիւրերս զարմացած էին և ինձ էին նայում հար-  
ցական դէմքով։ Ակնարկեցի սպասելու, յետոյ, երբ յի-  
րաւի Սիսակը կլզեց քարերի մէջ ու նստեց—հրաւիրե-  
ցի նրանց հետեւ ինձ։

Սաստիկ խղճում էի հարստահարուած երիտասար-  
դին, և, քանի որ իր դատը նա մեզ էր յանձնում, մը-  
տածեցի չմերժել։ Բացի դրանից, իմ մէջ ևս կուտակ-  
ւում էր զայրոյթ այն մարդու դէմ, որ մի ամբողջ տա-  
րի խարելով, տնիկեսայ շինելու յոյսեր տալով՝ շահա-  
գործել էր որըին և այժմ, երբ ճահիճը մի շքեղ, ար-  
դիւնաշահ պարտէզ էր դարձրել—այժմ վռնտում էր  
նրան և մինչև իսկ կաշառքի ոյժով դրդում ստարշինա-  
յին՝ գիւղից էլ քշելու։

—Գնանք, տասցի հիւրերիս—հետաքրքիր բան է։

Եւ առուակը չանցած, բաւական մանրամասն պատ-  
մեցի նրանց եղելութիւնը։

—Տօ գնանք է մէկ, գոչեց Գէորգը (հիւրերիցս  
մէկը)—գնանք այդ անպիտան ծերուկի մօրուքը թափ  
տանք քիչ։

—Արժէր դրան մի լաւ դնքսել. աւելացրեց Յա-  
կովը (միւս հիւրս)՝ չէի կարող երևակայել այդ աստի-  
ճան հարստահարութիւն գիւղում։

—Մա դեռ մի երևոյթ է. գիւղում տեղի ունեցող  
հարստահարութիւնը այնպէս մեծ չափերով է լինում,  
որ գիւղացին ցանցի նման բռնուած է, ծծւում ու չո-  
րանում...

<sup>1)</sup> Զատապէք։

Ոստնեցինք առուրի վրայից և մօտեցանք պարտէ-  
զին: Յիրաւի, լեռնադաշտի ոչ մի գիւղում չէի տեսել  
այդքան խնամքով և ճաշակով շնուրած պարտէզ: Զար-  
մացած կանգ առինք մեծ բաց դարպասի առաջ:

—Օհօ, գոչեց Յակովը—ստ ինչ սիրուն պարտէզ  
է. կարծես մասնագէտի ձեռքի գործ լինի:

Վանդակաձեւ մեծ դուն կողքից ձգում էր աւա-  
զածածկ մի լայն ծառուղի դէպի ներս: Պարտէզն ամ-  
բողջ նախ շրջապատուած էր փշալից խիտ ցանկորմով,  
իսկ յետոյ՝ առած ուռիների շրջանակի մէջ: Ապա, ա-  
նասունների մուաքը լիովին արգիլելու համար՝ պար-  
փակուած էր լայն խրամով: Իւրաքանչիւր թիզ հողը  
ներսում մշակուած էր ու մաքրած: Անտառից բերած  
վայրի խնձորենիների կոճղերի վրայ պատուաստած ըն-  
տիր ճիւղերն այժմ լաւ բռնել էին և ծաղկել: Մի կողմը  
—կեռասենիք, սալորենիք, մի ուրիշ գծով՝ արքայամո-  
րու բազմաթիւ թիւեր, վարդենիներ. աւելի ցած՝ լորիի  
ցցերը զինուորների կանոնաւոր շարքերով՝ կանաչ էին  
կապել, իսկ նրա առջևում գետնախնձորի մաքուր ու  
լաւ տկօններ ցոյց էին տալիս ամենալաւ տեսակի տուն-  
կեր:

Ինչեր ասես չկար.—ընդեղէն, կաղամք... Ու այդ  
բոլորը շատ կանոնաւոր տեղաւորած մաքուր մարգե-  
րով. ոչ մի փուշ կամ քար:

Գինձի մարգի մէջ կուչ եկած քաղճանք էր անում  
Գրիգորը: Կուզ ու կարճ մի ծերունի, որ մեր ձայնը  
լսելով՝ դարձաւ նայեց, յետոյ ուսքի ելաւ քահանը ձեռ-  
քին:

—Բարե, ծերունի:

—Աստծու բարին... Էս ոնց էլաւ, պ. Երուանդ, որ  
եկաք բաղս տեսնելու... Համեցէք:

—Դրացի ենք գրեթէ, ասացի ես—չգիտէի որ այս-  
քան մօտիկ, այսպիսի դեղեցիկ պարտէզ կայ. իմ պար-  
տէզը սրա մօտ անապատ է...

—Լտէնց ա. Ժպտեց ծերունին—ուրիշի ձեռքով ա-

բած բանը բա ի՞նչ պիտի ըլի. մարդ իրա, իրա ձեռքովը պիտի շինի, իրա քըտինքը պիտի թափի հողի վրէն...

—Բայց մի՞թէ այս բոլորը քն իսկ ձեռքովը քն քրտինքովն ես շինել ու մշակել. հօր, ծերունի. հարցրեց տաքութեամբ Յակովը:

—Հա... արեց ծերունին բաւական համարձակութեամբ—բաս ուրիշ էլ ով ունիմ:

—Ղօչաղն ես եղել, դիտեց Գէորգը ծաղրով—լաւ էլ այգեպան:

—Կանես՝ կը սովորես... Ճշմարիտ ա, էս բոլորը—ասած կը լինի պարոնը—իմ ձեռքովս չեմ տնկել շինել, ամա ես էլ շատ քըտինք եմ թափել ըատեղ:

—Այսինքն ի՞նչ, գոչեց Յակովը—գուցէ այս ծառերն ես դու պատուաստել:

—Զէ:

—Կամ այս պատը դու քաշել... չլինի՝ խրամը քո փորածն է...

—Մարգերը դժւ ես կազմել, գետնախնձորը դժւ մշակել... աւելացրեց Գէորգը:

—Կամ այս մորիների թփերը դժւ բերել անտառից...

—Գուցէ այդ ուրիները դու տնկել, այդ ծառուղիները...

—Զէ', աղաներ, յաջողուեց ասել ծերունին խօսքերի այդ կարկուտի տակից—չէ', էտոնք իմ շինածները չի... իմ... իմ մշակն ա, իմ նոքեարն ա շինել,

—Ի՞նչ նոքեար. զարմացաւ Գէորգը ինձ դառնալով—ուրեմն վարձատրել է:

—Սպասիր, ծերունի, միջամտեցի ես—խօսքդ Սիսակի համար է... լաւ, թող նոքեարդ եղած լինի. իսկ որքան վարձ ես տուել նրան. տուել ես օրինակ այնքան, որքան ես տալիս եմ. ինչժամ ուրեմն ամսական 10 ր. առնելով ինձնից, նոյն ջանքով չի մշակում պարտէզս:

— Ո՞նց, գոչեց ծերունին—տարեկան 120 մանէթ  
ես տալիս... վիշտ... հացն էլ, տժւնն էլ...

— Այո... կօշիկ, մի ձեռք էլ հագուստ:

— Ասում էին—չէի հաւատում... բա էդ ոնց ա որ  
քո բաղը սրանից լաւ չի շինել... ի՞նչ դալին ա էլէլ  
տօն...

— Լսիր, ծերունի, միջահատեց Յակովը — դու էն  
ասա թէ դու ի՞նչքան վարձ ես տուել նրան, դու...

Ծերունին շփոթուեց, փորձեց ժպտել, խօսքը կը-  
տուրը ձգել, բայց Յակովը ամուր էր բռնել նրան, իսկ  
ես ու Գէորգը ծիծաղում էինք:

— Փիշ... արեց վերջապէս ծերունին—քո ի՞նչ  
բանն ա էդ, ախապէ՛ր, դու նրա վէջի՞ն ես... ես գի-  
տենք ու նա... էդ մեր գործն ա...

Ու Յակովը սկսեց. «Թափահարել» նրան մի ֆիլի-  
պեականով, ուր խառն կային և ծաղը և կծու յարձա-  
կում, և բարոյախօսութիւն։ Օրինսակ.

— ... Քանի տարեկան ես, ծերունի... վաթսուն...  
Տես, էլ ու մազ չկայ գլխիդ. մէջքդ էլ կամուրջի նման  
ծոռւել է. մէկ էլ տեսար՝ մի օր ընկար ու ոտքերդ  
պարզեցիր... հը՝ ի՞նչ է, կարծում ես էն աշխարհումը  
քեզ հարցնող չի՝ լինելու թէ՝ «ա Գրիգոր, այ ծերուկ,  
ինչի Սիսակին խարեցիր, ողջ տարին բանացրիր, ճա-  
ճիճդ այգի շինել տուիր, աղջկադ խոստացար. նա  
կարծեց թէ իր աշխատանքի պտույն ի՞նքն է վայելելու,  
ողջ ջահելութեան ոյժը դրեց հողիդ վրայ, բայց դու  
վոնտեցիր նրան ու աշխատանը՝ խալշեցիր»... Հը՝, ի՞նչ  
է, չի՝ գտնուկի մէկ սատանայ, որ էդ մօրուքիցդ մի  
բռնի, էն կարէ կարասը կոխի ու հանի, եա քեզ քարէ-  
քար խփի, երկնքից գետին շպրտի...

— Փիշ, փիշ... անում էր ետեւ քաշուելով ծե-  
րունին—տօ եկել էք ինձ խեղդելմւ... տօ դուք պրի՞ս-  
տաւ էք, ստարշինամ էք...

— Հը՝, չէ, դու այն ասա. մօտենում էր նրան Յա-  
կովը սպառնալից—կարծում ես էն թարս ոտներով,

պողերով ու պոչերով սատանաները քեզ բաց կը թող-նեն. եա թէ չէ, հէնց էս կեանգում, դու չես մտածում որ եթէ Թիֆլիզում ձեռքս ընկնես, քեզ ծեծելով թան կը շինեմ, էդ մազերդ կը սեացնեմ մուրով... եա թէ չէ, Սիսակն է, կատաղեց ու մի օր էլ բռնեց քեզ հէնց այստեղ խեղդեց, էս բաղն էլ քար ու քանդ արեց, տը-րորեց ու ինքն էլ կորաւ գնաց...

— Տօ ձեռք քաշի է... մեղայ Աստուծոյ... տօ ես ի՞նչ եմ ասում... հիս թող գնայ պաշպորտ բերի...

— Պաշպորդ... քայլեց դէպի նա Յակոբը - տօ դու անմստուած ես, մլթժնի ես. քսան տարի գիւղում մեծացած մարդուց պտշպորտ կ'ուզեն... տօ դու չես կարդացել Աւետարանում, որ կաշառք տուողին դժոխքումը քսան անգամ հալած արծիճի մէջ են թաթախելու, հարիւր չորս չամչա <sup>1)</sup> կրակ են լցնելու բերանը, ամեն օր երեք անգամ ձեռքերը դաշելու են, կաշառք տուող ձեռքն էլ շների առաջ են քցելու... տօ բաս դու Աւետարանին էլ չես հաւատում...

Մենք, ես ու Գէորգի ծիծաղից չփատէինք ինչ անել, տեսնելով ծերունու լրջօրէն վախենալն ու ետ-ետ քաշուելը, իսկ Յակոբի ծաղրով լի սպառնալիքները:

— Համ էլ որ, վերջացրեց սուր խաղով Յակոբը իր խօսքերի կարկուտը — ես է ես քաղաք գնալիս՝ գուրեր-նատորին ասելու եմ որ քեզ բռնեն հոգիդ հանեն... ի՞նչ է, դու ի՞նչ ես կարծում ինձ. կարծում ես որ քի՞չ փող ունիմ կաշառելու բոլորին ու քեզ քշել տալու գիւղը... Բայց ամենից առաջ ես քեզ մի լաւ կը ծեծեմ էգուց. հէնց ըստեղ կը դամ քոթակ կը տամ, թէ աղջիկդ չես առւել Սիսակին...

Կատարեալ մոլիէրական բռնի ամուսնութեան կերպարանքն էր ստանում հարցը: Մերունին կարկամել էր. վերցրեց գետնից բահը, մի ոստիւն գործելով դուրս թռաւ ծառուղուց և ծածկուեց ծառերի ետել:

<sup>1)</sup> Շերեփ:

իսկ մենք մի մեծ քրքիջ բարձրացրինք և այդպէս էր որ գուրս զնացինք պարտէղից:

Այդ ամենն անշուշտ բաւական զուարճալի կը լինէր, զուարճացրած իմ հիւրերին—եթէ միայն քարերի մէջ սպասելիս չլինէր թշուառ Սիսակը, որ գուցէ յոյս ունէր մեր միջամտութեան վրայ, գուցէ կարծում էր որ երեք «աղա» քաղաքացիները պիտի կարողանային ջարդել ծերանու յամառութիւնը, պիտի յաջողութն վերականգնելու իր իրաւունքները և վերջ տալու տանջանքներին...

Այդ մտածութիւնը երեխ բոլորիս իսկոյն համակեց առուկից անցնելուն պէս, որովհետև անմիջապէս լրջացանք և լուռ՝ քայլեցինք դէպի գետակը:

—Շնծերը... բացականչեց Յակովը—Աստուած է վկայ, որ վաղը գնալու եմ նրան գնքսեմ. Թող ինչ ուզում է լինի:

Ոչ մէկս չխօսեցինք: Քարերի վրայ կուչ եկած՝ անշարժ նստել էր Սիսակը՝ դէմքը ձեռքերի մէջ: Զլսեց մեր մօտենալը. գետի խոխոջը չէր թողնում:

Ի՞նչ ասել այժմ նրան, ի՞նչպէս մխիթարել:

—Սիսակ...

Դարձաւ ու ոտքի ելաւ:

Ցուզմունքը ծածկել անհնար եղաւ: Լացել էր. լաց էր լինում և գունատ դէմքը թրջուած էր աղի արցունքով:

Յիրաւի... որբ, վոնտուած, հարստահարուած և անտուն. անցեալում յոյսերով լի, երիտասարդութեան ամբողջ ոյժը դրած մի հողի վրայ, որը իրանն էր կարծել և ահա այժմ կողովտուած ու նետուած...

Գուցէ և աղջկան սիրում էր նա, երազներնվ ու յոյսերով լի ապրել էր տարիներ ամբողջ և այժմ յանկարծ ամէն ինչ խարխլուած, ամէն ինչ կորցրած՝ արտասուքն էր միայն մնացել մխիթարիչ...

—Սիսակ, գոչեցի յուզուած—ամօթ է...

—Ի՞նչու ամօթ, աղա-ախպէր, ինչի. ասաց արտասուալից—էլ ի՞նչ ունիմ, էլ որտեղ գնամ, որ քարին.

գլուխս զնեմ... Գիտեմ, դուք էլ չկարացիք բան անել... փող ունի—զորբայա, տալիս ա, իրաւունքի ձէնը խըլացնում... Աստուած էլ խօ շատ հեռու ա... բա էլ Բ'նչ անեմ որ լաց չ'ըլեմ...

—Կաց տօ, ձեռքը դրեց նրա ուսին Գէորգը նոյնպէս յուզուած—կաց, Բ'նչ ես կնկայ պէս լալիս. տղամարդ ես, մի բան մտածիր...

—Եա թէ չէ գնա բռնի խեղտի... կանչեց կատաղութեամբ Յակովբը:

—Թէ Բ'նչ... գլուխը շարժեց Սիսակը — դրանով աղջկը կը տան, հողա կը տան... Զէ, աղա—ախպէրներ, ես կորած մարդ եմ, ես սկի մարդ էլ չեմ... ոչ ոք չունիմ, ամէնքը զուզում են անում ինձ, ամէնքը նրա կողմն են, հարուստ մարդ ա, իրանց գեղացին ա... Ստարշինան էլ, քեծիսվան էլ, պրիստաւն էլ... Աղջիկն էլ. աղջիկը հօր կողմն ա... առանց հօր իրաւունքի՝ երեսիս նայել չի ուզում... Ախր ես ով եմ, տժուն ունիմ, ծնողք, ազգական ունիմ—թէ փող՝ որ սրան նրան—խեղդեմ, որին ուզեմ քշել տամ, պատժել տամ... Իմը լայն ա. ամա հմի լացի վրայ էլ են ծիծաղում...

Ասաց, նստեց դարձեալ քարերի վրայ և ձեռքերով գլուխը ծածկեց:

Մթնաշաղի, վերահաս զիշերուայ մէջ, երկար նրա սև կոյտը հեռուից երևում էր խոխոջող գետափին՝ անշարժ ու յուղիչ...

Վ. Փափազնան